

պէս հայութեան վիճակը այդ անվերջ բախումներու ընթացքին: Բուռ մը հայութիւնը, բուռ մը վրացութեան հետ՝ զրեթէ խապառ մեկուսացած իսլամի եւ թուրքութեան ուղիւնին մէջ:

Ինկիլերի տէրերը պիտի տեսնեն իրենց առջեւ ազատ ճամբայ մը՝ իրազործելու համաթուրանական իրենց ծրագրի իրազործելի մասը — թաթարական գոյէ նաեւ պարսկական Աղբալէյճանի գրաւումը, ամբողջ Կովկասի գրաւումը: Կրնան չյաջողիլ, կրնայ պատահիլ, որ հայ, վրացի, ռուս եւ նոյնիսկ իսլամ ժողովուրդներու մէկ մասը միացած զրոհ տան օսմանցիներու այդ յորձանքին դէմ, բայց — եւ այս երկրորդ վարկածը, տարաբախտաբար աւելի հաւանականն է — կովկասցիներու այդ դիմադրութիւնը կրնայ խորտակուիլ — ինչպէս 1918-ին եւ այն ատեն Մահիկի տիրապետութիւնը պիտի հաստատուի տեւականօրէն Մասիսի ու Էլպուտի միջեւ...:

Եթէ անգամ հայ ժողովուրդը վերապրի այդ ցնցումներէն ու — վերստին ենթարկուած թուրքական լուծին — կարողանայ վրացիներուն պէս յարմարիլ ստեղծուած կացութեան ու կերպով մը քարշ տալ իր դոյութիւնը — նա չունի այլեւս սպառնալիք եւ օր մը պիտի կորչի թուրանական հեղեղին մէջ... Ուքրայնան չէ, որ պիտի յետ մղէ այդ հեղեղը: Ուքրայնայի հայրենասէրները իրենց հակառուս զգացումներէն մղուած, այսօր եռանդով կը սիրաբանեն Մոսկովի անհաշտ թշնամիներուն հետ — լեհերու, վրացիներու, թուրքերու, թաթարներու...:

«Աղբերու Դաշնակցութիւնը» պիտի ունանա՞յ արդեօք այն ուժն ու ազդեցութիւնը, որ կ'ուզեն տալ անոր Անգլիոյ եւ բոլոր երկիրներու Աշխատաւորականները, պիտի ունենա՞յ այնքան ուժ ու ազդեցութիւն, որպէսզի — դաւոյց հնարաւոր աղէտներու միջոցին — յաղթականօրէն միջամտէ եւ փրկէ թուրքական բռնակալութեան ճիրաններէն կովկասեան երկու քաղաքակիրթ ժողովուրդները, որոնց ճակատագրի առթիւ այնքան մտահոգութիւն ցաւ ու ափսոսանք կ'արտայայտէ Ռամգէյ ՄակԴոնալդ մեղի ուղղած իր նամակին մէջ. that is the question. Հնարաւոր է, անշուշտ:

Յոռետես վարկածներուն հետ — զոր պէտք է հոլովել պարբերաբար, որպէսզի մեր ժողովուրդը, երիտասարդութիւնը եւ մանաւանդ մեր յառաջատար-մտաւորականութիւնը չմըրափին ծոյլ, թուլամորթ անհոգութեան մէջ եւ չտարուին բիւզանդական կորստաբեր վէճերով — հարկ է եւ տեղին է հնչեցնել երբեմնապէս նաեւ լաւատես չեչտեր: Հնարաւոր է, որ Աղբերու Դաշնակցութիւնը, այն ատեն զօրացած, ճնշողական միջոցներու տէր՝ փրկութեան խարխիւ հանդիսանայ Կովկասի հայածական ժողովուրդներուն հանդէպ: Ան արդէն այսուհետեւ միակ խարխիւն է բոլոր ճնշուած աղբերու ազատագրական ճիգերուն:

1924-ին, իրաւ է, Մեծն Բրիտանիոյ բնակերվարական Վարչապետը, Ռամգէյ ՄակԴոնալդ, լքեց ապստամբ Վրաստանի դատը՝ սովետական Ռուսիոյ հետ չընդհարուելու համար: Ոչ մէկ ընկերվարական եւ դեմոկրատ, ոչ իսկ իրենք քիչ-չատ խելացի վրաց առաջնորդները կրնան պահանջել, որ Անգլիան մենամեակ, վրացիներու սիրուն աչքերուն համար ձեռնոց նետէ Ռուսաստանին: Եւ եթէ Աշխատաւորական կուսակցութիւնը ընէր այդպիսի քայլ, երեք օր պիտի չկրնար մնալ իշխանութեան գլուխ: (Ընդամէնը 150 հոգի էին Աշխատաւորականները Խորհրդարանին մէջ):

Ո՛չ ոք կարող էր մեղադրել ՄակԴոնալդը, եւս առաւել՝ որ վրացիներու սաքաժ ապրստամբութիւնը անմիտ ու անխորհուրդ արկածախնդրութիւն մըն էր... Այդպէս կը խորհէին ամէնքը:

Գուցէ Անգլիոյ Աշխատաւորական կառավարութիւնը կրնար յարուցանել Աղբերու Դաշնակցութեան միջամտութիւնը: Բայց, այդ ալ միամիտ, անյոյս ձեռնարկ մըն էր, քանի որ Ժընեւեան հաստատութիւնը միջոց մը չունէր ազդելու Սովէտներու վրայ, լաւագոյն պարագային կրնար արձակել միայն պլատոնական որոշում մը, եթէ ոչ ամուլ սպառնալիք մը: Փոքրիկ ճառ մը եւ ուրիշ ոչինչ: Այդպէս ալ եղաւ:

Այլ բան է, երբ ապագային Ժընեւի մարմինը պիտի դառնայ ազդու, իրական ուժ մը, իր խօսքին տէր, իր որոշումներն ու սպառնալիքներն իրազործող՝ միջազգային ոստիկա-